


214. Ի՞նչ միավորով է չափվում նյութի խտությունը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 մ^2 :
- 2) 1 կգ/մ^3 :
- 3) $1 \text{ մ}^3/\text{կգ}$:
- 4) 1 կգ/մ^2 :

215. Նշված նյութերից որի՞ խտությունն է ավելի մեծ:

- 1) Ջուր:
- 2) Կերոսին:
- 3) Փայտ:
- 4) Երկաթ:

216. Նկարում պատկերված մարմինը չափազանի մեջ ընկղմելիս ջուրն ab մակարդակից բարձրացավ մինչև $a'b'$ մակարդակը: Որքա՞ն է մարմնի ծավալը: Չափազանի սանդղակի թվերն արտահայտված են սմ^3 միավորով:



- 1) 81 սմ^3 :
- 2) $4,5 \text{ սմ}^3$:
- 3) $3,4 \text{ սմ}^3$:
- 4) $2,8 \text{ սմ}^3$:

217. Միևնույն նյութից պատրաստված երկու համասեռ խորանարդների կողերը միմյանցից տարբերվում են երկու անգամ: Ինչպիսի՞ն է այդ խորանարդների զանգվածների հարաբերակցությունը:

- 1) Հավասար են:
- 2) Տարբերվում են 2 անգամ:
- 3) Տարբերվում են 4 անգամ:
- 4) Տարբերվում են 8 անգամ:

218. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ուժը մարմնի արագության փոփոխության պատճառն է:
- 2) Ուժը մարմնի դեֆորմացիայի պատճառն է:
- 3) Ուժը վեկտորական մեծություն է:
- 4) Ուժի ազդեցությամբ մարմնի արագության մոդուլը միշտ աճում է:

219. Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:

Ուժը կարելի է որոշել՝ չափելով...

- 1) նրա ազդեցությամբ հայտնի զանգվածով մարմնի ձեռք բերած արագացումը:
- 2) նրա ազդեցությամբ հայտնի կոշտությամբ զսպանակի երկարացումը:
- 3) հայտնի խտությամբ մարմնի ծավալը:
- 4) այն հավասարակշռող մեկ այլ ուժ:

220. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Մեկ նյութն այն ուժն է, որը ...

- 1) 1 կգ զանգվածով մարմնին հաղորդում է $9,8 \text{ մ/վ}^2$ արագացում:
- 2) 1 կգ զանգվածով մարմնին հաղորդում է 1 մ/վ^2 արագացում: